

գործակալութիւնն ըրաւ, նախ ի Գաղթն,  
յետոյ ի Բատուա:

Հ. Գրիգոր Վ. Ճէլալեան, դեռ հազիւ  
քահանայ ձեռնադրուած՝ կը մտնէ գրական  
աւպարիզին մէջ, և ընդարձակ ու ման-  
րակրկիտ ուսումնասիրութիւն մը կը հրա-  
տարակէ Վիկտոր Ալֆրէդի իտալացի մա-  
տենագրին վրայ խաղմովէպի 1855ի եօթն  
պրակներու մէջ: Յետոյ, բաց ի գրաբար  
քանի մը քննութեաներէ՝ «Առ  
Մասին»ը հայրենաշունչ եռանդով տո-  
ղուած է — կը թարգմանէ 1858ին՝ «Մենն-  
դեան խթումը» վիպակը՝ «Զրօսարան ման-  
կանց»ի շարքին մէջ դնելով: 1862ին՝ Լա-  
մէ Ֆլօրիի «Պատմութիւն Անգղիոյ» գոր-  
ծը, 1863ին՝ Բրոսէր Մէրիմի «Աղանի»  
և ժ. Սանտոյի «Մագդաղինէ» վէպերը,  
1902ին հրատարակեց Գոռնէյի «Նիկո-  
միդէս» ողբերգութիւնը: Իբրև ինքնագիր  
գործ՝ տուաւ 1861ին՝ «Լուդովիկոս Ժ.Չ.  
Աղէտը թագաւորական ընտանեաց» սրտա-  
նմիկ պատմութիւնը: Այս ամէնքը տուաւ  
հայ ժողովուրդին՝ աշխարհաբար լեզուով,  
և գրաբար լեզուին՝ որուն հմուտ էր՝ ծա-  
ռայեց «Առձեռն Բառագրքի» երկրորդ տը-  
պագրութիւնը հրատարակելով, ուր կա-  
րեւոր սրբագրութիւններ, փոփոխութիւն-  
ներ, յաւելումներ ըրաւ և փորձերու սըր-  
բագրութեամբ աչքերուն լոյսը զոհեց հայ  
հասարակութեան:

Շատ հմուտ էր ընդհանուր պատմու-  
թեան և մատենագրութեան:

Մօտաւորապէս 60 տարի գործունեայ  
կեանքով մը ապրել է ետք, երբ կեանքի  
աշնան, ու տարւոյս աշնան գետին կ'ըլ-  
նայ Միսիթարայ ծառէն՝ ծերունագարդ  
վարդապետը, իբրև ազագուն տերև մը չէ  
որ ոչընչանալու կ'երթայ, այլ բեղմնաւոր  
սերմ մը՝ որ պիտի ծլի, պիտի ապրի իր  
գործունէութեան պտուղով և իրեն յաջորդ  
միաբանակիցները և երախտապարտ աշա-  
կերտները օրհնութեամբ պիտի յիշեն զին-  
քը, մաղթելով իր վաստակաբեկ մարմնոյն՝  
«Վշանգիտան յաւիտենական», և հոգւոյն՝  
«Վլոյսն մշտնջենաւոր»:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

### ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

- Հ. Ա. Վ. ՏԻՐՈՅԵԱՆ. — Բանաստեղ-  
ծական լեզուն և հայկական լա-  
փին գրաւած տղը . . . 433-448

### ԳՐԱԿԱՆՔ

- Հ. Ս. ԵՐԵՄԵԱՆ. — Գեր. Եղուարդ Վ.  
Հիւրմիւրեան . . . 449-467  
Հ. Ա. Վ. ՏԻՐՈՅԵԱՆ. — Հայակ իտա-  
լական գրականութեան. — Վին-  
չենցոյ Մոնտի . . . 497-498  
— Մատնագրաց զարմանալի սխալ-  
ներ . . . 522-524

### ԳԻՏԱԿԱՆ-ԲԺՇԿԱԿԱՆ

- Գունաբուծութիւն . . . 518-522

### ՎԻՊԱՍԱՆԱԿԱՆ

- ՀԱՆՐԻԿՈՍ ՍԻՆԵՔԷՎԻՉ. — Զրհեղելը. —  
Թրգմ. Հ. Ա. Գոնտաքճեան . 467-490

### ՔԵՐԹՈՂԱԿԱՆՔ

- Հ. Ղ. Մ. ԱԼԻՇԱՆ. — Յերկերիբեակ  
Ուխտի Միթարայ (անտիպ քե-  
թուած) . . . 496  
ՎԻՃԱՆՏՈՅ ՄՈՆՏԻ. — Գալէոտոյ Ման-  
ֆրէդի Ողբերգութիւն. Թրգմ. Հ.  
Ա. Վ. Տիրոյեան . . . 499-508  
ՊԵՏՐՈՍ ՄՈՃՈՒԽԱՆ. — Նախիրգանք (մի  
հատուած Աստղիկ Պօէմայի) . 495-496

### ԿԵՆԱՍԳՐԱԿԱՆՔ

- ՊԵՏՐՈՍ ՄՈՃՈՒԽԱՆ. — Երաժշտագետ  
Նիկողայոս Տիգրանեան . 490-494  
Հ. Մ. ՊԵՏՐՈՅԵԱՆ. — Հանգիստ Հ. Գրի-  
գոր Վ. Ճէլալեանի . . . 527-528

### ԶԱՆԱԶԱՆՔ

- ՊՈՈՅ ՓԼԵԹԷՐ ԵՎ ԵՆԷՐ. Խաղերու գիտու-  
թիւնը . . . 509-514  
ՄԱՐԿՈՅ ՊԵՍՈՅ. Տանդէի բաղդը իտա-  
լիայէն գուր . . . 514-518  
ԱՅԼ ԵՎ ԱՅԼՔ. — Տարօրինակ մրցումն  
շատակերութեան. — Հաշտագէտ  
ձիեր. — Գաղղիոյ հարստութիւ-  
նը. — Արև, արև. — Ալֆրէ տը  
Միսսէ և ճատրակի խաղը . 525-527